

**Իրանահայ համայնք**

**Քուշեշ-դավթյան դպրոցի շենքը ԸՂ դեսպանատանն է հանձնում**



Երկօրյա պաշտոնական այցով Թեհրան այցելած Հայաստանի Հանրապետության վարչապետը եւ իրեն ընկերակցող պատվիրակությունը 2010 թվականի երկուշաբթի, հոկտ. 25-ի երեկոյան այցելեցին ,արարատ մարզավան, ուր մասնակցեցին ազգային իշխանության կողմից կազմակերպված ընդունելությանը: այցելության ընթացքում ՀՀ վարչապետի ներկայությամբ Իրանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանի եւ Թեհրանի հայոց Թեմական խորհրդի ատենապետ Աիդա Հովհաննիսյանի միջեւ ստորագրվեց մի համաձայնագիր, ըստ որի՝ ,թեմական խորհուրդը դեսպանատան օգտագործման համար դեսպանատանն է հանձնում Թեհրան քաղաքի Ջոմհուրի պողոտա, Սիրգա Քուշաք խան փողոց հասցեում գտնվող նախկին ,քուշեշ-դավթյան դպրոցի շենքը (նոր շենք)ե (հողված 1): ըստ նույն համաձայնագրի՝ ,հի դեսպանատունը պարտավորվում է սույն համաձայնագրի ստորագրման թվականից մինչեւ մեկ տարի պարպելով՝ Թեմական խորհրդին վերադարձնել ՀՀ դեսպանության կողմից ներկայունս զբաղեցրած շենքը (հողված 2): մյուս կողմից՝ ,թեմական խորհուրդը պարտավորվում է պետական բոլոր թույլտվությունները (հատկապես Իրանի արտագործնախարարության թույլտվությունը դեսպանատան նոր շենք տեղափոխելու մասին) ստանալուց մինչեւ 15 օր նոր շենքը ներկա գույքերից պարպված՝ հանձնել դեսպանատանն (հողված 7):

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

26.09.2010  
Վերջին օրերում Թեհրանի Առաջնորդարանի, հայկական եկեղեցիների, դպրոցների եւ միությունների շրջապատում եւ հարակից փողոցներում փաքցվել են պարսկերեն լեզվով պատրաստված՝ Թեհրանի հայոց թեմի (ԹՀԹ) Թեմական խորհրդի պաստառներ, ուր անդրադառնում է Մեծի տանն կիլիկիո Արամ կաթողիկոսի, ԱՄՆ-ում որոշ անհատների կողմից Մուսուլմանների սուրբ գրքի՝ Դուրանի այրման դատապարման երեւոյթին: «Իրանահայ» կայքէջը անդրադառնալով այս լուրին, տեղադրել է Թեհրանի

Թեմական խորհուրդի կնիքով հրապարակված հիշյալ պաստառներից մի պատկեր, ուր Մեծի տանն կիլիկո կաթողիկոսը, պարսիկ հանրությանը ներկայացվել է՝ Ամենայն հայոց կաթողիկոս: Հիշեցնենք, որ Դաշնակցության անմիջական վերահսկողության ներքո աշխատող ԹՀԹ Թեմական խորհուրդը, նախապես եւս պարսկերենով հրապարակած իր հայտարարություններում Արամ կաթողիկոսին ներկայացրել է՝ Ամենայն հայոց կաթողիկոս: Հուսանք, հայ եկեղեցվո համապատասխան մարմինները, համարժեք միջամտությամբ վերջակետ կդնեն, կրկնվող այս արտառոց երեւոյթին:

**ԻՐԱՆԱԸԱՅԵՐՆ ՕԺԱՆՂԱԿՈՒՄ ԵՆ ՆՈՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆԵԻՆ**

«Հայաստան» համահայկական հիմնադրամից տեղեկացանք, որ 2007 թվականից իրանահայ համայնքի հովանավորությամբ հիմնադրանք ծրագրեր է իրականացնում Սյունիքի մարզի Նոնաձոր համայնքում: Նոյեմբերի 4-ին Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդի հովանավորությամբ հիմնադրանք շահագործման հանձնեց Նոնաձորի նորակառույց ջրամատակարարման համակարգը: Ամսի 4-ի միջոցառման վերջում Իրանի մեր հայրենակիցները դպրոցական պայուսակներ նվիրեցին գյուղի 34 աշակերտների եւ խոստացան հաջորդ այցի ժամանակ գրքեր նվիրել Նոնաձորի ու հարեւան գյուղերի դպրոցական գրադարաններին:

**Հայաստան**

**Մեկնարկեց լրագրողների համահայկական 5-րդ համաժողովը**



Արցախյան հերոսամարտի զոհերի հուշահամալիր այցելությամբ Ստեփանակերտում հոկտեմբերի 13-ին մեկնարկեց լրագրողների համահայկական 5-րդ համաժողովը՝ մասնակցությամբ 26 երկրի շուրջ 200 լրագրողի: ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի մատուցմամբ՝ նման բովանդակությամբ համաժողովի անցկացումը ԼՂՀ մայրաքաղաքում շատ կարելոր է եւ խորհրդանշական: «Համոզված եմ, որ նման համաժողովները դրական արդյունք կունենան»: ԼՂՀ նախագահը կարելորեց Հայաստան-Արցախ-Սփյուռք միասնությունը, որի կատարյալ ամրության պարագայում բոլոր խնդիրները կլուծվեն:

«Միասնական լրատվական ճակատի ստեղծումը կտապալի հակառակորդի քարոզչությունը, որը հենված է կեղծիքի եւ ստի վրա», ասաց նա:

Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանը, ներկաներին փոխանցելով Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի ուղերձը, նշեց, որ տասնյակ տարիներ տեղեկատվական պատերազմի շրջանակներում պայքարում են կեղծիքն ու ճշմարտությունը, եւ Հայաստանն էլ այդ պատերազմի խաչմերուկում է: «Լրագրողներն առաջին զօհ մարտիկներն են: Ի տարբերություն մեր հարեւանների՝ մենք պատմություն կերտելու կարիք չունենք: Մեր ճշմարտությունը պետք է ներկայացնենք աշխարհին, որովհետեւ միջազգային հանրությունը ծանոթ չէ խնդրին», ասաց նա:

Կարեւորելով մամուլի դերը հասարակության կյանքում սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը շեշտեց այն հինգ գլխավոր կետերը, որոնց պարագայում որեւէ լրատվամիջոց եւ լրագրող պետք է լինեն միակարծիք եւ համախմբված:

«ԼՂ հարցը պետք է ներկայացնել միջազգային հանրությանը, քաղաքական գործիչներին, հասարակությանը: Հայոց ցեղասպանության մասին մամուլի դիրքորոշումը հստակ է, սակայն երբեք չենք խոսում ցեղասպանության հետեւանքների մասին, չենք գրում, որ այսօր էլ Հայաստանում եւ Արցախում շարունակվում է ցեղասպանությունը, որովհետեւ այսօրվա շրջափակումը 1915-ի ցեղասպանության շարունակությունն է, որ ստիպում է մեզ տառապել: Իսկ տառապանքի գինը ոչ ոք չի որոշել: Պետք է ուշադրություն դարձնել Հայաստանի եւ Արցախի տնտեսական հզորացմանը, Սփյուռքի հայապահպանության հիմնախնդիրներին, հավատքին եւ կրոնին», ասաց նա:

**ՄԵՐ ԱԶԳՆ ՈՒ ԲԱՆԱԿԸ**



Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Արկադի Տեր-Թադեւոսյանը երեկ կայացած ասուլիսում հայադրբեջանական պատերազմի վերսկսումը բացառող երաշխիքներ համարեց «մեր ազգն ու բանակը»: Կոմանդոսը, սակայն, նկատեց, որ այսօր մեր հասարակությունը բաժանված է. «Պետք է միավորվենք, կենտրոնանանք, ձգտենք մեր երկրի ներսում լինել միահամուռ, որպեսզի դա տեսնի միջազգային հանրությունը, տեսնի Ադրբեջանը: Մենք կարողացել ենք ապացուցել, որ քիչ լինելով կարողացել ենք դիմագրավել ադրբեջանական հսկայածավալ ուժերին:

Մենք հաջողության հասած ազգ ենք ու պետք է հպարտանանք: Ես դեմ չեմ քրիստոնեական ուսմունքին, բայց դաժանությանը պետք է պատասխանել դաժանությամբ, պետք է պատասխանն աղեկվատ լինի: Հակառակորդը տարիներ շարունակ խախտում է հրադադարի ռեժիմը, զնդակոծում է մեր դիրքերը, իսկ մենք լռում ենք: Մարդկայնորեն դա ճիշտ է՝ մարդը չպետք է մարդ սպանի, բայց նման պայմաններում դա հնարավոր չէ: Մենք պետք է դիմենք համարժեք քայլերի, այլապես հնարավոր չէ կանգնեցնել հակառակորդին: Շփման գծում կրակում են, մերոնց ասում են՝ չկրակեք: Մենք ունենք զենք, ունենք փամփուշտներ, բայց ադրբեջանական կողմից հնչող տասնյակ կրակոցներին մեկ կրակոցով ենք պատասխանում», ասաց արցախյան հերոսը՝ ընդգծելով, որ ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հայկական բանակի բարոյական ոգին այսօր շատ բարձր է: Շուշին ազատագրած գործողությունների դեկավարը նաեւ անդրադարձավ բանակում վերջին շրջանում տեղի ունեցող միջադեպերին: Գեներալը նկատեց, որ ամեն մի կոլեկտիվում, հասարակությունում ամեն ինչ չի կարող հարթ ընթանալ: «Բանակում տեղի են ունենում ավելի շատ լավ բաներ, քան վատ, բայց այդ վատը փակում է լավը, ինչն էլ առիթ է դառնում քննադատությունների», ասաց նա ու շարունակեց, որ մասամբ մեղավոր է նաեւ պաշտպանության նախարարությունը, որի կապը հասարակության հետ եղել է «շատ թույլ ու կիսափակ»:

**ՎԱՅՈՑ ԱՂՎԱՆԵ՝ ԱՉԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՎ**

Ադրբեջանահայերի ասամբլեայի նախագահ Գրիգորի Այվազյանը մտադիր է Կովկասում ստեղծել նոր պետություն՝ Հայոց Աղվանք՝ Լաչին մայրաքաղաքով: Այս մասին երեկ ասուլիսի ընթացքում հայտարարեց Այվազյանը: «Մենք առաջիկայում մտադիր ենք դիմել ԼՂՀ-ին խնդրանքով՝ մեզ տրամադրել 7 ազատագրված շրջանները Լաչին մայրաքաղաքով, անկախ եւ ինքնիշխան ադրբեջանահայության հանրապետություն ստեղծելու նպատակով», ասաց Այվազյանը: Ընդ որում, նոր հանրապետությունը, որն, ըստ Այվազյանի, կանվանվի Հայոց Աղվանք, չի բացառվում, որ ժամանակի ընթացքում հանրաքվեի միջոցով կմիանա կամ ԼՂՀ-ին, կամ Հայաստանին: «Մենք կանցկացնենք ժողովրդավարական ընտրություններ, ունենք անգամ գալիք պետության դրոշմ ու զինանշանը: Ուզում են շեշտել, եթե մենք այդ տարածքներում բնակություն հաստատենք, ապա դա կանենք ոչ որպես վերաբնակիչ, այլ՝ այդ տարածքների օրինական տերեր: Այս կերպ մենք մեկընդմիջտ կփակենք զիջումների ճանապարհը, մանավանդ, բոլորիս համար էլ պարզ է՝ Ադրբեջանը ոչ մի զիջում էլ մտադիր չէ անել: Կարելու է նաեւ նկատել, որ երբ մենք բնակություն հաստատենք այդ տարածքներում՝ հանրապետություն ստեղծելով, կլեգիտիմացնենք այդ տարածքների վերամիավորման հարցը ԼՂՀ-ին կամ ՀՀ-ին», ընդգծեց Գրիգորի Այվազյանը՝ հավելելով, որ նորաստեղծ հանրապետությունում կապրի մոտ 1 մլն ադրբեջանահայ համայնքը, որի բնակության հարցը կլուծի Ադրբեջանահայերի ասամբլեան:

Հիշեցնենք՝ դե յուրե հանդիսանալով Ադրբեջանի քաղաքացի, Գրիգորի Այվազյանը ներկայացրել է իր թեկնածությունը նոյեմբերի 7-ին կայանալիք Ադրբեջանի խորհրդարանական ընտրություններում: Այդ երկրի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, սակայն, որեւէ կերպ չի հաստատել Այվազյանի գրանցումը՝ որպես թեկնածուի: Վերջինս ավելի վաղ հայտարարել էր անգամ, որ մտադիր է մասնակցել նաեւ Ադրբեջանի

նախագահական ընտրություններին. համաձայն հարեւան երկրի սահմանադրության՝ Այվազյանն այդ իրավունքն ունի:

**«Մենք ընդդիմությանն էլ ենք դեմ».**

**Հայաստանի կոմունիստական**

**կուսակցություն**

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը պատրաստվում է մասնակցել առաջիկա խորհրդարանական ընտրություններին: Այս մասին այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավար Ռուբեն Թովմասյանը:


Նախատեսվում է, որ գործող մյուս երկու կոմունիստական կուսակցությունները՝ Առաջադիմական միացյալ կոմունիստական կուսակցությունը և Նորացված կոմունիստական կուսակցության միավորվեն մեր կուսակցության հետ: Միավորման հարցը քննարկվելու է նոյեմբերի 29-ին կայանալիք Հայաստանի կոմունիստական կուսակցության 38-րդ համագումարի ժամանակ,- ասաց նա:

Ռ. Թովմասյանը նշեց, որ իր կուսակցությունը ընտրություններին մասնակցելու է իշխանությունը ժողովրդին կարգախոսով:

Բանախոսը ընդգծեց, որ իրենց կուսակցությունը միշտ էլ հանդես է եկել արմատական ընդդիմության դիրքերից:

Մենք նպատակ չունենք առաջիկա խորհրդարանական ընտրություններում սատարել որևէ կուսակցության: Մենք այսօրվա ընդդիմությանն էլ ենք դեմ, մենք նպատակ չունենք սատարել ՀԱԿ-ին, բանի որ նրանց և մեր նպատակները շատ տարբեր են,- ասաց նա:

**ԸՇ նախագահն ընդունել է ԻԻԸ խորհրդարանի նախագահին**



ԵՐԵՎԱՆ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 9-ին ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանին և նրան ուղեկցող պատվիրակությանը:

Ինչպես Արմենպրես-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, հանրապետության ղեկավարը, ողջունելով հյուրին, վստահություն է հայտնել, որ Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի նախագահի այցը մեր երկիր լրացուցիչ խթան կհանդիսանա երկու երկրների բարեկամության առավել արմատացման համար: Մեր ժողովրդի կողմից Ձեր երկիրը, Ձեր ժողովուրդը դիտարկվում է որպես դարերի ընկեր, որպես վստահելի և մերձավոր բարեկամ: Ուրախ են, որ այսօր մեր հարաբերությունները լավ մակարդակի վրա են գտնվում: Մենք կարելու ենք մեր երկրների ղեկավարների միջև բարձր մակարդակի երկխոսությունն ու բարձրաստիճան

փոխայցելությունները,-ասել է ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը:

Ալի Լարիջանին նշել է, որ Իրանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները կարող են լավ արդյունավետ հիմք հանդիսանալ տարածաշրջանի կայունության պահպանման համար: Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի նախագահը ընդգծել է ,Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի կարելությունը՝ որպես ցանկացած տարանցիկ նոր ուղղության ստեղծում, որը կարող է շահավետ լինել դրա բոլոր անդամների համար: Երկուստեք կարելու է ռազմավարական նշանակություն ունեցող այնպիսի նախագծերի իրականացումը, ինչպիսիք են Իրան-Հայաստան երկաթգծի, Արաքս գետի վրա համատեղ ՀԷԿ-ի, Իրան-Հայաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման երրորդ գծի, նավթամթերքների խողովակաշարի կառուցումը: Զրուցակիցները գոհունակությամբ ընդգծել են, որ Հայաստանի եւ Իրանի ջերմ հարաբերությունների ձեւավորման գործում իրենց նպաստն ունեն երկու երկրների օրենսդիր մարմինների արդյունավետ փոխգործակցությունը:

**C-300-ը ԵՎ ԼՂԸ ՕՊԱՆԱԿԱԿԱՅԱՆԸ**

Մինչ ԵԱՀԿ գնահատման առաքելությունը ակոսում է դարաբաղյան հեռուները, Ստեփանակերտում պատրաստվում են օդանավակայանի շահագործմանը: Վերակառուցումն ավարտվում է, եւ արդեն խոսվում է այն մասին, որ 1992-ին փակված օդանավակայանը շուտով կվերակառուցվի և աշխատանքը:

Ակնհայտ է, որ օդանավակայանը կընդունի ռազմական ինքնաթիռներ: Սակայն, այն կօգտագործվի նաեւ քաղաքացիական նպատակներով: Առաջին եւ հավանական չվերթը համարվում է Ստեփանակերտ-Երևանը: Սակայն, հավանական է, որ առաջին չվերթը կկատարվի ոչ թե դեպի Հայաստան, այլ արտերկիր, ասենք՝ Ռուսաստան: Ակնհայտ է, որ առանց անվտանգության հուսալի երաշխիքների Ղարաբաղը չէր բացի օդանավակայանը: Իսկ լավագույն երաշխիքը կարող էր դառնալ Ղարաբաղում արտերկրի ավիաընկերությունների աշխատանքը, ըստ ամենայնի՝ ռուսական: Թեւ չի բացառվում, որ Ղարաբաղը անվտանգության երաշխիքներ է ստացել ԱՄՆ-ից:

Այնպես որ, չի բացառվում, որ Ստեփանակերտի օդանավակայանից առաջին չվերթն իրականացվի ասենք Կրասնոդար, որտեղ ապրում են պատերազմի ժամանակ դեպորտացիայի ենթարկված հազարավոր դարաբաղցիներ: Շատերը չեն վճարում իրենց գյուղերն ազատագրելուց հետո, այդ թվում այն պատճառով, որ Ղարաբաղում անվտանգության երաշխիքներ չեն տեսնում: Եւ չվերթի բացումը ազդանշան կլինի, որ երաշխիքներ կան:

Բացի այդ, Ստեփանակերտից ավիաչվերթների անվտանգության երաշխիք կարող են դառնալ Ադրբեջանին վաճառված C-300 համակարգերը: Ինչպես հայտնի է, Ռուսաստանը վաճառում է համակարգերը, սակայն դրանց կիրառման տեխնոլոգիան չի տալիս: Այնպես որ, հնարավոր է, ռուսական C-300-ը թշնամական հրթիռներից պաշտպանելու է Ստեփանակերտի օդանավակայանը: Իր հերթին, ՀՀ պաշտպանության

Ճախարար Սեյրան Օհանյանն էլ հայտարարել է, թե Ղարաբաղում կան ոչ միայն C-300 համակարգեր, այլև հակաօդային պաշտպանական այլ հուսալի համակարգեր:

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ

**Իրան**

**Հայ-իրանական սահմանում ՅԷԿ-ի շինարարությունը կարժենա 323 մլն դոլար**



Յուլի 15, 2010 | 19:03

Իրանի Էներգետիկայի նախարարության երկօրյա այցը Հայաստան ավարտվել է երեք հուշագրի ստորագրմամբ: Հուշագրերն այսօր՝ սեպտեմբերի 15-ին ստորագրել են երկու երկրների Էներգետիկայի նախարարներ Արմեն Մովսիսյանն ու Մահջիդ Նեմջունը:

Հուշագրերից երկուսը վերաբերում են երկու երկրների համագործակցությանը Էներգետիկայի ոլորտում, քննապահականությանը սահմանամերձ գոտում, ինչպես նաև սահմանային Արաքս գետի ջրի մաքրությանը: Երրորդ հուշագիրը վերաբերում է Մեղրիի հիդրոէլեկտրակայանին:

Ինչպես մամուլի ասուլիսի ժամանակ նշել է Հայաստանի Էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը, հիդրոէլեկտրակայանի կառուցումը կարող է մեկնարկել արդեն 2012 թվականին: Ծինարարության համար պահանջվող 323 մլն. դոլարն ամբողջությամբ կտրամադրի ներդրող երկիրը, այսինքն՝ իրանական ներդրող կազմակերպությունը: Հուշագրի համաձայն, Մեղրիի հիդրոէլեկտրակայանի շինարարությունը պետք է ավարտվի 5 տարվա ընթացքում, որից հետո դրա արտադրած էլեկտրաէներգիան կտեղափոխվի Իրան 230 կՎտ հզորությամբ էլեկտրահաղորդման գծով, որը նույնպես կկառուցվի ներդրող երկրի միջոցներով:

Այդ մոտեցումը կործի ՅԷԿ-ի կառուցումից հետո 15 տարվա ընթացքում: Այնուհետև, Մեղրիի ՅԷԿ-ն անհատույց կտրվի Հայաստանին: Ընդ որում՝ ՅԷԿ-ի հանձնման պահին, փորձագիտական եզրակացությունը պետք է փաստի, որ կայանի սարքավորումները կարող են ծառայել եւս 10 տարի, իսկ թունելն ու ինժեներական այլ կառույցները՝ 30 տարի: Նախատեսվում է, որ Մեղրիի ՅԷԿ-ի շինարարությանը կներգրավվեն գրեթե 2 հազար բանվորներ՝ հիմնականում մոտակա բնակավայրերից:

Իրանի Էներգետիկայի նախարար Մահջիդ Նեմջունը նշել է, որ Մեղրիի ՅԷԿ-ը հայ-իրանական առաջին ու վերջին նախագիծը չէ: Նրա խոսքով, այցի ընթացքում քննարկվել են համատեղ Էներգետիկ ծրագրերի հեռանկարները, որոնց մասին, սակայն, նախարարը մանրամասներ չհայտնեց:

Նշենք, որ ներկայումս Հայաստանի եւ Իրանի Էներգափոխանակությունը կատարվում է երկու էլեկտրատար գծերով, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 350մՎտ:

**Տեղի է ունեցել Է ՀՀ վարչապետի և ԻԻՀ նախագահի հանդիպումը**

25 October, 2010 10:26:00 Իրանահայեր Լրատու ցանց



Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի նստավայրում այսօր կայացել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի և ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հանդիպումը: ՀՀ կառավարության ղեկավարը վստահություն է հայտնել, որ Իրան կատարած պաշտոնական այցը նոր լիցք կհաղորդի հայ-իրանական տնտեսական կապերի աշխուժացմանը, որոնք դեռևս զիջում են բարձր մակարդակով քաղաքական հարաբերություններին: Տիգրան Սարգսյանը Իրանի նախագահի հետ խոսել է երկկողմ հետաքրքրություն ներկայացնող տնտեսական ծրագրերի մասին: Մահմուդ Ահմադինեժադն իր հերթին նշել է, որ տնտեսական կապերի որակը քաղաքական հարաբերություններին հասցնելու համար որևէ սահմանափակում չկա, և Իրանը պատրաստ է օժանդակել բոլոր նախաձեռնություններին: ՀՀ վարչապետը վերահաստատել է Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հրավերը Իրանի ղեկավարին՝ Հայաստան այցելելու վերաբերյալ: Այցի ժամկետները կհստակեցվեն դիվանագիտական խոդովակներով: Մահմուդ Ահմադինեժադը բարձր է գնահատել Հայաստանի նախագահի այցը Իրանի Իսլամական Հանրապետություն և խնդրել՝ ՀՀ նախագահին ու հայ ժողովրդին փոխանցել իր ամենաջերմ բարեմաղթանքները: Հայաստանի կառավարության ղեկավարը շնորհակալություն է հայտնել Իրանի ղեկավարությանը հայ համայնքի նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի համար: Զրուցակիցները կարևորել են համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, բանկային ոլորտում համագործակցությունն ու երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

**Սյունիքում նախատեսվում է ստեղծել արդյունաբերական գոտի**

27 October, 2010 05:12:00 Իրանահայեր Լրատու ցանց

Սյունիքի մարզում հնարավոր է ստեղծվի արդյունաբերական գոտի, որտեղ ձևավորված ձեռնարկությունները կունենան մեկ ընդհանուր նպատակ՝ բացահայտել այն ներուժը, որն ունի Հայաստանը գյուղատնտեսության, թեթև արդյունաբերության և այլ ոլորտներում: Իրանի Իսլամական Հանրապետությունում հոկտեմբերի 26-ին տեղի ունեցած հայ-իրանական գործարար համաժողովի

ժամանակ նման հայտարարությամբ հանդես է եկել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը՝ հավելելով, որ այդպիսի գոտու ստեղծումն առավել արդյունավետ կդարձնի երկաթգծի կառուցման աշխատանքները, քանի որ մասնավոր հատվածի համար կլինի լրացուցիչ խթան ներդրումներ կատարելու երկաթգծի կառուցման աշխատանքներում:


«Մեր ձեռներեցները մաքսային ծառայությունների աշխատանքին վերաբերող մի շարք խնդիրներ բարձրացրեցին այս օրերի ընթացքում, այդ պատճառով մենք հրավիրել ենք Իրանի մաքսային ծառայության ղեկավարին այցելել Հայաստան և հայ գործընկերների հետ քննարկել այդ ոլորտում համագործակցության արդյունավետության բարձրացման վերաբերյալ հարցեր»,- ասել է գործադիրի ղեկավարը՝ կարևորելով իրանցի գործընկերների կողմից արված այն առաջարկը, որը ենթադրում է ստեղծել միասնական մաքսային դարպաս: ՀՀ վարչապետի պարզաբանմամբ, դա նշանակում է, որ տնտեսվարող սուբյեկտները ընդամենը մեկ անգամ են շփվելու մաքսազերծման ընթացքի կազմակերպիչների հետ, որն էլ ենթադրում է, որ երկու երկրների մաքսային ծառայությունների միջև պետք է ստեղծվեն համապատասխան ենթակառուցվածքներ, հաստատվեն կանոններ, որոնք հասանելի կլինեն բոլոր տնտեսվարող սուբյեկտներին: «Անհրաժեշտություն կա, որպեսզի մեր իրանյան գործընկերներն ավելի լավ պատկերացում ունենան Հայաստանի օրենսդրության մասին, իսկ մեր գործարարներին անհրաժեշտ է ավելի մանրակրկիտ ներկայացնել Իրանի օրենսդրությունը՝ տնտեսական հարաբերություններ հաստատելու համար: Այս հանդիպումների ընթացքում ակնհայտ է, որ մենք ունենք նման տեղեկատվության պակաս, և կարծում ենք, որ այդ պակասը կարող են լրացնել մեր երկու երկրների Առևտրային պալատները»,- ասել է Տիգրան Սարգսյանը՝ պատրաստակամություն հայտնելով Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատին լրացուցիչ իրավասություններ տրամադրել մաքսազերծման գործընթացները հեշտացված կարգով իրականացնելու համար:

ՀՀ վարչապետի խոսքով, Հայաստանը և Իրանը պատմականորեն ունեցել են բարիդրացիական հարաբերություններ և երկու պետությունների միջև ձևավորված այդ հարաբերությունները, բավականին բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը հրատապ է դարձրել մի խնդիր, համաձայն որի՝ պետք է բացահայտվի նաև մեր երկրների տնտեսական ներուժը: «Մեր առևտրաշրջանառության ծավալների մեջ Իրանը զբաղեցնում է ընդամենը յոթերորդ տեղը այն պարագայում, երբ մեր հաշվարկները ցույց են տալիս, որ հնարավոր է էապես բարձրացնել այդ ցուցանիշը և կազմակերպել այնպիսի առևտրաշրջանառություն, որ տնտեսապես ավելի ձեռնտու լինի: Ջանքեր են ներդրվելու նաև տուրիզմի զարգացման առումով:

Այստեղ մեր տուրիստական գործակալությունները անելիքներ ունեն՝ ներկայացնելու մեր երկրների տուրիստական գրավչությունները»,-նշել է Տիգրան Սարգսյանը:

Հայ-իրանական համագործակցության ոլորտները կընդլայնվեն նաև կրթական ոլորտում: Նախատեսվում է հայագիտական կենտրոն ստեղծել Թեհրանի պետական, և Իսլամագիտական կենտրոն՝ Երևանի պետական համալսարաններում:

ԻԻՀ հանքերի, առևտրի ու արդյունաբերության պալատի նախագահ Մոհամմադ Նահավանդիանը կարևորել է ՀՀ վարչապետի գլխավորությամբ հայաստանյան պատվիրակության այցը Իրանի Իսլամական Հանրապետություն՝ նշելով, որ ինքն էլ նոր է վերադարձել Հայաստանից և մտքերի փոխանակության այսպիսի ինտենսիվությունը շատ անհրաժեշտ է: «Այն խնդիրները, որոնց մասին խոսվեցին այս երկու օրերի ընթացքում, գտնվում են Իրանի նախասիրությունների շարքում: Մենք ցանկանում ենք բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարևան պետությունների հետ ու այդ առումով գործադրելու ենք բոլոր ջանքերը համագործակցության եզրեր փնտրելու համար»,- ասել է Մոհամմադ Նահավանդիանը: Նա նույնպես հատկանշական է համարել արդյունաբերական գոտու ստեղծումը, որի միջոցով տնտեսության մի շարք ոլորտներում կարձանագրվեն հաջողություններ: «Արդյունքում կկարողանանք մեծացնել շահույթը, և կրճատել ծախսերը»,- ասել է Մոհամմադ Նահավանդիանը: Իրանի Իսլամական Հանրապետության նախագահական համալիրի կենտրոնական մասնաշենքում Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանը պատասխանել է լրագրողների հարցերին: Վարչապետը շնորհակալություն է հայտնել իրանական կողմին ջերմ ընդունելության համար և նշել, որ քննարկումների ժամանակ փորձել են փնտրել համագործակցության նոր ուղիներ: Մեր քաղաքական հարաբերությունները գտնվում են ավելի բարձր մակարդակում քան տնտեսականը, և անհրաժեշտություն կա նոր թափ հաղորդել տնտեսական հարաբերություններին: Մեր հանդիպումների ընթացքում բացահայտվեցին նոր, կոնկրետ նախագծեր, որոնք մենք պետք է իրականացնենք: Վերջին շրջանում նկատելի է, որ Իրանի քաղաքացիների այցելությունները Հայաստան ընդլայնվում են: Մենք շահագրգռված ենք այդ առումով և դրա համար ստեղծելու ենք բոլոր բարենպաստ պայմանները: Պարսկերենը Երևանի փողոցներում արդեն դարձել է սովորական,- ասել է Տիգրան Սարգսյանը:





**Շասարակական**

**ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՇՐԱՎԵՐՆԵՐԸ ՊԱՇՏԱՆՁՈՒՄ ԵՆ ՆՈՐ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐ**

Մոտ մեկ ամիս առաջ Ստեփանակերտում տեղի ունեցավ Լրագրողների համահայկական հինգերորդ համաժողովը: Իր արդյունավետությամբ այն աչքի ընկավ թե՛ քանակի եւ թե՛ որակի տեսանկյունից: Այս անգամ համաժողովին մասնակցում էին 200 լրագրողներ եւ խմբագիրներ՝ 100-ը Սփյուռքից եւ 100-ը Հայաստանից: Այն օգտակար էր երկու տեսանկյունից: Առաջին՝ այն վեր հանեց խնդիրներ, որոնք լուրջ մարտահրավեր են ներկայացնում հայ տեղեկատվության ներկա ժամանակում: Երկրորդ՝ Հայաստանում, Արցախում եւ արտերկրում գտնվող հայ լրագրողներն ու խմբագիրները հրաշալի առիթ ունեցան իրար հետ շփվելու, միմյանց հետ ծանոթանալու եւ անձնական հարաբերություններ հաստատելու: Մի բան, առանց որի դժվար է համագործակցել, երբ մարդուն չես ճանաչում եւ չգիտես, թե ինչ անձ է e-mail-ի կամ հեռախոսի հակառակ կողմում:

Նաեւ այս տեսանկյունից սփյուռքի նախարարության այս նախաձեռնությունը հերթական ողջունելի քայլն էր՝ իրականացված հայաստանյան իշխանությունների կողմից: Նախորդը, որ դարձյալ շատ բարձր են գնահատում, ՀՀ նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի եւ տեղեկատվության» կենտրոնի ստեղծումն էր, որի աշխատանքի արդյունավետությանը վկա են եղել անձնական փորձով: Հայաստանին եւ տարածաշրջանին վերաբերող լրատվության ստացման եւ ապահովման ուղղությամբ աշխատանքների ժամանակ այս թիմի պրոֆեսիոնալիզմն ու նվիրումը մեծ օգնություն եղան մեզ համար՝ որպես սփյուռքահայ մամուլի: Հետեւաբար, վերոհիշյալ երկու նախաձեռնությունները, մեկը մեկին լրացնելով, կարող են շատ օգտակար լինել թե՛ տեղական եւ թե՛ սփյուռքահայ մամուլի համար, եթե կապն օգտագործվի արդյունավետորեն:

Քանի որ ժամանակակից ընթերցողը թերթային մտածողությունից տեղափոխվում է դեպի ինտերնետային ընթերցանություն, սա լուրջ մարտահրավեր է մեր համահայկական լրատվությանը՝ հետեւելու այս տեսակ մտածողության փոփոխությանը: Վերջերս Facebook սոցիալական ցանցն օգտագործողների թիվն անցավ 500 միլիոնը, իսկ Twitter-ն այս տարվա ապրիլի 10-ի տվյալներով արդեն ուներ 100 միլիոն օգտագործող ամբողջ աշխարհում: Ահա, թե որտեղ են այսօրվա ընթերցողները: Նրանք սոցիալական ցանցերում ու որոնման համակարգերի (Google, Bing, Ask, AOL, Yandex, Rambler, Baidu) լրատվական բաժիններում են: Հետեւաբար, ժամանակն է, որ համահայկական լրատվությունը թերթային մտածողությանը զուգահեռ

նաեւ արագ քայլեր կատարի՝ իր ամուր դիրքերն ունենալու համացանցում:

Պարզապես ինտերնետային կայք ունենալը դեռ ոչինչ չի նշանակում: Այսօր հայկական գրեթե բոլոր թերթերն ունեն իրենց կայքէջերը: Սփյուռքում ոչ բոլոր թերթերն ու պարբերականներն ունեն կայքէջեր, բայց նույնիսկ նրանց համար, ովքեր ունեն, այդ փաստը շատ քիչ է հաջողության հասնելու համար: Լուրջ պարզապես կայքէջում տեղադրելը դեռ չի նշանակում, թե այն հասու է դառնում օտար կամ թեկուզ հենց հայ ընթերցողին: Յուրաքանչյուր լրատվամիջոց պետք է հատուկ մարտավարություն ունենա համացանցում ընթերցողին հասնելու համար: Հասանելի լինելով ինտերնետային լայն մասսաների՝ մեր մամուլը կարող է ոչ միայն իր ուրույն տեղն ունենալ համաշխարհային լրատվության ոլորտում, այլ նաեւ եկամտաբերություն ապահովել՝ դառնալով ավելի զորեղ: Ահավասիկ կոնկրետ քայլերի նախագիծ՝ այդ նպատակին հասնելու համար:

1. Ունեցեք վեբ-կայք

Ցանկալի է, որ կայքն ունենա բաժիններ այլ լեզուներով նույնպես, քանի որ ընթերցողների լայն մասսաներ կարող են այլ լեզուներով: Նպատակն է՝ այդ լեզուներով ընթերցողների մոտ ստեղծել հասարակական կարծիք հայերի մասին եւ եկամուտներ ապահովել, որոնց միջոցները կօգնեն իրականացնել ձեր համահայկական եւ մամուլի հզորացման ծրագրերը:

2. Ուսումնասիրեք Google News եւ Bing News

համակարգերը ձեր լեզուներով: Հայերեն չկա, բայց կա գրեթե բոլոր լեզուներով: Գրանցվեք [Google.com/news](http://Google.com/news) եւ [Bing.com/news](http://Bing.com/news) համակարգերում՝ ձեր կայքերը մուտքագրելով այնտեղ: Շատ կարելու է, որ դուք մանրակրկիտ ձեռով հետեւեք նրանց կանոններին, որպեսզի իրենք ընդունեն ձեր մամուլը՝ իրենց որոնող համակարգում: Սա ձեզ ավելի շատ ընթերցող կբերի եւ հետեւաբար՝ եկամուտ:

3. Դիմեք Google AdSense գովազդային ծրագրին, որը

ձեզ կօգնի եկամտաբեր դարձնել ձեր թերթը, ռադիոն, TV-կայքը եւ մամուլը՝ [www.google.com/adsense](http://www.google.com/adsense) :

4. Ուսումնասիրեք նաեւ այլ գովազդային ծրագրեր եւ

տեսեք, թե դրանք ինչպես կարող են ավելացնել ձեր եկամուտները, օրինակ՝ Vibrant Media, Kontera, Tribalfusion, Valueclick, Yandex Direct, Begun :

5. Օգտագործեք Google Analytics

[www.google.com/analytics](http://www.google.com/analytics) ՝ ամբողջական ինֆորմացիա ստանալու համար, թե օրական քանի մարդ է կարդում ձեր կայքը, որտեղից են կարդում, որքան ժամանակ են անցկացնում այնտեղ եւ թե ինչպես են ձեզ գտել:

6. Ինտերնետից մի բացակայեք ոչ մի օր, տպագրվեք

ամեն օր: Եթե կայք ունեք եւ ամեն օր չեք գրում գոնե մեկ լուր ձեր կայքում, ապա դա ձեզ համար վատ է. մարդիկ հիասթափվում են, երբ նորություն չեն տեսնում եւ այլեւս չեն վերադառնում: Նույնը էլ՝ որոնման համակարգերը:

7. Ազդեցիկորեն օգտագործեք Twitter, Facebook, Digg, Reddit, Stumbleupon` տարածելու համար ձեր լուրերը: Տեսեք, թե ինչպես են մեծ թերթերը, օրինակ, Huffington Post-ն օգտագործում Twitter եւ Facebook. շատ հաջողված օրինակ է: Նրանք իրենց էջերում ամենուր դնում են Twitter-ի, Facebook-ի եւ այլ սոցիալական ցանցերի լոգոները:

8. Բոլոր այս կետերն անվճար են եւ ոչ մի ծախս չեն պահանջում, այլ ավելացնում են ձեր եկամուտները եւ մեծացնում ձեր լուրերի տարածման շրջանակը:

ՈՐՄԵՆ ՀԱՐԵՅԱՆ, <http://www.huliq.com>

## Թուրքիայի իսլամացված հայերի խնդրի որոշ ասպեկտների շուրջ

Պատմական դեպքերի հետևանքով այնպես է ստացվել, որ բռնի կրոնափոխության պատճառով հայության որոշ խմբեր եւ ստիպված են եղել իսլամ ընդունել: Հեռանալով քրիստոնեությունից՝ հայության այդ խմբերը ժամանակի ընթացքում հաճախ հեռացել են նաև քրիստոնեություն



դավանող իրենց ցեղակիցներից, կորցրել լեզուն: Մրա գլխավոր պատճառներից է նաև այն, որ ինչպես անցյալում, այնպես էլ շատ հաճախ մեր օրերում կրոնական պատկանելությունը գերադասվել է էթնիկ պատկանելությունից և մարդկանց տարբերակել են համաձայն այդ սկզբունքի: Ըստ այդմ, հայ և քրիստոնյա տերմինները նույնացվել են, և բացառվել է այլակրոն հայ հասկացությունը: Արևելագետ Ալեքսան Խաչատրյանը այս առիթով նշում է. «Քրիստոնեությունը հայերի համար ոչ միայն դավանանք էր, այլև աշխարհայացք, ազգային գոյության հիմք: Այդ պատճառով էլ հավատափոխությունը միջնադարյան Հայաստանում գրեթե համազոր էր ազգային դիմախեղման: Այլ կրոնի հարել նշանակել է ազգությունը փոխել: Քրիստոնյա, ընդ որում լուսավորչական, լինելը դիտվել է որպես հայության չափանիշ: Դավանափոխությունը, հետևաբար, որակվել է որպես ազգուրացություն և դավաճանություն»[1]:

Ավանդաբար կրոնափոխ հայության խնդիրը համարվել է հայագիտության ամենակարևոր և քիչ ուսումնասիրված հարցերից մեկը: Ներկայումս ևս այդ խնդիրը առկա է մեր գիտության օրակարգում: Եթե թերթենք մեր գիտական մամուլը, ապա կտեսնենք, որ տարբեր ժամանակներում

շատ հայտնի գիտնականներ են հանդես եկել հիշյալ խնդրի համակողմանի ուսումնասիրության կոչով: Եթե ավելի վաղ դարերի ընթացքում իրենց արմատներից բռնի հեռացված հայության մասին կան լուրջ և մակերեսային աշխատանքներ, ապա հատկապես 20-րդ դարի սկզբին՝ Հայոց ցեղասպանության տարիներին, բռնի իսլամացված հայության խնդիրները վերջին տարիներին են հայտնվել մեր գիտական, հասարակական շրջանակների օրակարգում: Թուրքիայի բռնի կրոնափոխ հայության խնդիրը բազմաշերտ է և պահանջում է համապատասխան վերաբերմունք: Կրոնափոխ հայերի ուսումնասիրությունը և նրանց ուղղությամբ տարվող աշխատանքները կարևոր են, սակայն այս հարցում անհրաժեշտ և պարտադիր է որդեգրել մասնագիտական մոտեցում, հակառակ պարագայում կարող են ի հայտ գալ անցանկալի արդյունքներ:

Տարբեր դարերում բռնի իսլամացված հայության ոչ բոլոր խմբերն են մինչև մեր օրերը պահպանել էթնիկ պատկանելության գիտակցությունը կամ հիշողությունը, սակայն որոշ խմբերի մոտ դրանց հետքերը, այնուամենայնիվ, դեռևս նկատվում են: Խոսքն ավելի շուտ վերաբերում է 19-րդ դարի վերջերի հայկական կոտորածների և 1915թ. ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված հայության և նրանց սերունդներին: Այս նույն հարցի համատեքստում իր յուրահատուկ և ուրույն տեղն է զբաղեցնում նաև 16-րդ դարից սկսած բռնի իսլամացման ենթարկված՝ Սև ծովի հարավարևելյան ափերին բնակվող հայությունը, որն ավելի շատ հայտնի է համաշխարհային անվամբ:

Դեպքերի բերումով բռնի իսլամացված հայության գերակշիռ մեծամասնությունը բնակվում է ներկայիս Թուրքիայում, սակայն նրանց առանձին խմբեր կան Եվրոպական մի շարք երկրներում, ինչպես նաև Միջին Ասիայում:

Այժմ Թուրքիայում բնակվող 20-րդ դարի սկզբում իսլամացված հայությունն առավելապես ձևավորվել է հետևյալ խմբերից.

- ա. Հայոց ցեղասպանության ժամանակ երբեմն միայն արտաքրուստ մուսուլմանություն ընդունած հայեր,
  - բ. ցեղասպանության ժամանակ առևանգված և այնուհետև թուրքերի կամ քրդերի հետ ամուսնացած հայ կանայք և աղջիկներ,
  - գ. ցեղասպանության ժամանակ մուսուլմանների կողմից բռնի որդեգրված հայ երեխաներ,
  - դ. որոշ թվով հայեր, որոնք ապաստան են գտել մուսուլման հարևանների կամ այլ մարդկանց մոտ,
  - ե. սահմանափակ թվով հայ արհեստավորներ և բացառիկ մասնագետներ, որոնք իսլամացել են իշխանության իմացությամբ և կամքով:
- Եթե որպես ելակետ վերցնենք իսլամացված հայության և նրանց սերունդների շրջանում տեղի ունեցող որոշ երևույթներ, ապա կարելի է նրանց պայմանականորեն բաժանել երկու խմբի:

1. Կան հայեր, որոնք արտաքուստ ներկայանում են որպես մուսուլման, բայց իրականում փորձում են գաղտնի շարունակել քրիստոնեական հավատքը, պահպանել ազգային նկարագրի տարրերը: Նրանց մի մասը տարիներով գաղտնի շարունակել է քրիստոնեական սովորությունների, տոների, ծեսերի առանձին տարրեր և բարենպաստ առիթ գտնելով (օրինակ՝ գավառներից Ստամբուլ տեղափոխվելով կամ արտագաղթելով Եվրոպա)՝ վերընդունել է քրիստոնեություն: Այս խմբին մասնագիտական գրականության մեջ կոչում են կրիպտո կամ ծպտյալ հայեր: Նրանց հատուկ են նաև ներէթնիկ ինքնագիտակցության այնպիսի երևույթներ, ինչպիսիք են, օրինակ, ներքին ամուսնությունները[2], և սա ուղղված է նաև էթնիկ նկարագիրը պահպանելուն:

2. Կան հայեր և հայերի սերունդներ, որոնք մասնակի յուրացրել են իսլամը, սակայն նրանց շրջանում պահպանվել են էթնիկ պատկանելության հիշողության, ազգային սովորությունների, երբեմն նաև մայրենի լեզվի առանձին տարրեր: Սակայն նրանք, ի տարբերություն ծպտյալ հայերի խմբի, չեն պահպանել կամ չեն կարողացել պահպանել էթնիկ, ազգային նկարագրի ամբողջական տարրեր: Այս նույն խմբին կարելի է դասել նաև այն մարդկանց, որոնք ունեն հայկական արմատներ. տատը կամ պապը հայ է եղել, և այդ հիշողությունը պահպանվել է նրանց մեջ: Սրանք էլ հենց կազմում են խառնածինների այն մեծ բանակը, որի գոյության փաստը քննարկման ավելի լայն ոլորտներ է ընդգրկում ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Իսլամացված հայերի և նրանց խառնածին հետնորդների մոտ երևույթները տարբեր են. մի մասը հպարտանում է իր հայկական արմատներով և առանձնահատուկ վերաբերմունք սկսում ցուցաբերել դրան, մի մասը փորձում է անտեսել այդ հանգամանքը, որպեսզի հասարակության մեջ չարժանանա «զյավուր», թշնամի հայի որակման, իսկ մի մասն ունի նաև ¥ հոգեբանական պատճառներով պայմանավորված) թշնամական վերաբերմունք հայության քրիստոնյա հատվածի հանդեպ: Ընդհանուր առմամբ Թուրքիայի կրոնափոխ հայերը, մեր կարծիքով, ուժացման տարբեր մակարդակներում գտնվող մարդիկ են, որոնց մոտ երևույթները և զարգացումները խիստ տարբեր են: Ակնհայտ է, սակայն, որ Թուրքիայում բնակվող բազմաթիվ ծպտյալ և իսլամացված հայերի շրջանում կա ազգային ակունքները պահպանելու, վերագտնելու ձգտում կամ գոնե դրանց հանդեպ հետաքրքրություն: Ընդ որում այս ամենն արտահայտվում է տարբեր ձևերով՝ հավատարմության փորձեր ինչպես զուտ էթնիկ առանձնահատկություններին, այնպես էլ իրենց նախկին կրոնի՝ քրիստոնեության սկզբունքներին: Սակայն Թուրքիայում իրենց գոյությունը պահպանած, ուժացման և ինքնության կորստի տարբեր մակարդակներում գտնվող հայերի մեջ էթնիկ ու կրոնական ինքնագիտակցության տարրերի գնահատման համար

պարտադիր և կարևորագույն պայման է հստակ պատկերացնել և հաշվի առնել այն միջավայրը, որտեղ ապրում են նրանք: Թուրքիայում, ուր հայ կամ ընդհանրապես ոչ մուսուլման լինելն այսօր էլ ծայրահեղ վտանգավոր է, դասական հայկականություն պահպանելը դժվար, եթե չասենք անհնարին է, առավել ևս ոչ միայն Ստամբուլում, այլև անհամեմատ ավելի հետամնաց, հետադեմ արևելյան շրջաններում: Այսինքն՝ այլակրոն հայերին ինչ-որ տեղ «մեղադրել» և հայ լինելու հայաստանյան չափանիշներով դատելուց առաջ պետք է հաշվի առնենք այս ամենը: Միայն ազգային կամ քրիստոնեական որոշ սովորությունների տարրերի ¥լրիվ կամ աղճատված) գաղտնի պահպանումը և կիրառումն ավելի բարենպաստ պայմաններում կարող են դառնալ նրանց հնարավոր դարձի կարևոր առիավատյան: Ծպտյալ և իսլամացված հայության խնդիրը բնականաբար հետաքրքրում և որոշակի անհանգստություն է պատճառում նաև թուրքական գիտական և «մերձգիտական» շրջանակներին , և սրա մասին են վկայում թեմայի վերաբերյալ օրեցօր ավելացող հոդվածները, գրքերը, ուսումնասիրությունները: Սակայն կարևոր է նշել, որ այս ամենը կարելի է դիտարկել «ինքնության ճգնաժամ» հասկացության շրջանակներում, որը մեր օրերում բավական հրատապ և օրակարգային խնդիր է Թուրքիայում: Վերջին ժամանակներս ավելի շատ քննարկվող և տարածում գտնող ինքնության թեման խորքային առումով դարձել է թուրք հասարակության ուշադրությանն արժանացած հարցերից: Կարծում ենք՝ բավական հետաքրքիր և ուշագրավ է հանգուցյալ Հրանտ Դինքի՝ Թուրքիայում ինքնության ճգնաժամի վերաբերյալ արտահայտած հետևյալ միտքը. «Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ ինքնության խնդրի»[1]: Այս նույն հարցին մի փոքր այլ դիտարկյունից է մոտեցել ազգագրագետ Հարություն Մարությանը, որի կարծիքով Թուրքիան մերժում է անցյալի, մասնավորապես Հայոց ցեղասպանության ճանաչումը ոչ միայն նյութական, տարածքային, բարոյական կորուստների հնարավորությունից խուսափելու համար, այլև «տասնամյակներ շարունակ ժխտողականության հիմքի վրա ձևավորված ազգային ինքնության հնարավոր խաթարման վախով, որը կարող է հանգեցնել ոչ միայն քաղաքացիական, այլև էթնիկ երանգ ունեցող մեծ հուզումների, որ վտանգավոր է դիտվում պետության միասնականության համար՝ առկա բազմէթնիկության պարագայում»[3]:

### Ծպտյալ հայերի կրոնադարձությունը

Հայկական ինքնագիտակցության տարբեր շերտերի պահպանման ամենախոսուն ապացույցներից կարող է լինել այն փաստը, որ պատեհ առիթի դեպքում բռնությամբ և հարկադրանքով իրենց արմատից կտրված հայերը վերադառնում կամ գոնե փորձում են վերադառնալ իրենց արմատներին: Դրա վառ օրինակը



տարբեր տարիների իսլամացված հայերի շրջանում պաշտոնապես արձանագրված կրոնադարձությունն է : Ընդ որում կրոնադարձվել են տարբեր սերունդների պատկանող հայեր. սա խոսում է նրանց մեջ իրենց արմատների վերաբերյալ առկա կոլեկտիվ և պատմական հիշողության պահպանման մասին:

Վերջին տարիներին Թուրքիայում աճել է գիտական, քաղաքական, հասարակական շրջանակների հետաքրքրությունը իսլամացված և ծպտյալ հայերի խնդրի նկատմամբ, որն ուղեկցվում է տարատեսակ շահարկումներով: Այստեղ կցանկանայինք առանձնացնել այն հանգամանակից հետազոտությունը, որն անցկացվել է Թուրքիայում իսլամից հրաժարված և այլ կրոն՝ հիմնականում քրիստոնեություն ընդունած քաղաքացիների շրջանում: Այս խնդիրը քննության է առնվել նաև միսիոներական շարժման նոր թափ ստանալու համատեքստում և ներկայացված է, թե Թուրքիայում եկեղեցու վերածված ինչքան տներ են գործում, քանի Ավետարան է բաժանվել մարդկանց և այլն: Մրանով փորձ է արվել պատասխանել նաև բավականին աշխուժորեն քննարկվող «քրիստոնեություն ընդունող թուրքեր» խնդրին և ի վերջո եկել են այն եզրակացության, որ կրոնափոխվածների գերակշիռ մասը ոչ թե թուրքեր են, այլ Թուրքիայում ապրող այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչներ (հայեր, հույներ, ասորիներ): Նշված հետազոտության ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրվել են բնակչության գրանցամատյանները ավելի քան 100 տարվա ընդգրկմամբ, որպեսզի տրվի այս հարցերի հստակ պատասխանը: Հայտնի են դարձել նաև հայերիս համար հետաքրքիր որոշ տվյալներ. այսպես, պարզվել է, որ 1916-2004թթ. ընթացքում Թուրքիայում իսլամից պաշտոնապես հրաժարվել է մոտ 2000 քաղաքացի, և մանրամասն ուսումնասիրությունից պարզվել է, որ նրանց մեծ մասը կամ ավելի որոշակի 1340-ը ծագումով հայեր են, որոնք վերընդունել են քրիստոնեություն: Հետազոտողները եկել են այն եզրահանգման, որ վերոնշյալ 1340 հայերը ոչ թե կրոնափոխ են, այլ կրոնադարձ, քանի որ բնակչության գրանցամատյանների ուսումնասիրության ընթացքում (ընդ որում նաև Օսմանյան ժամանակաշրջանի) վեր է հանվել այդ կրոնադարձների մինչև 3-րդ, 4-րդ պորտի նախնիների էթնիկ և կրոնական պատկանելությունը ու պարզվել է, որ հիշյալ մարդիկ ծագումով հայեր են, որոնց նախնիները Հայոց ցեղասպանության ժամանակ առերես ընդունել են իսլամ, որպեսզի ազատվեն արքայից ու կոտորածից, իսկ իրականում շարունակել են գաղտնի պահել քրիստոնեական ավանդույթները, այլ խոսքերով ասած՝ դրանք ծպտյալ հայերն են: Հետազոտություններում ամենայն մանրամասնությամբ ներկայացված է անգամ կրոնադարձության աշխարհագրությունը: Այսպես, կրոնադարձությունը ավելի շատ կատարվել է Մտամբուլում, ապա դրան հետևում են Դիարբեքիրը, Ադրյամանը, Բաթմանը, Սիվասը (Մեբաստիա), Թունջելին (Դերսիմ) և Մալաթիան: Ավելին, Մտամբուլում

կրոնադարձությունը ուսումնասիրել են նաև ըստ թաղամասերի և պարզվել է, որ կրոնադարձները ավելի շատ գրանցված են Մտամբուլի Ֆաթիհ թաղամասում (մոտ 150 մարդ), որին հետևում են Շիշլի և Էմինօնյու թաղամասերը: Ավելորդ չի լինի ներկայացնել նաև ծպտյալ հայերի կրոնադարձության մի քանի կոնկրետ փաստեր, որոնք տեղ են գտել թուրքական աղբյուրներում: Դրանցից պարզ է դառնում, որ երբեմն կրոնադարձվում են ամբողջ ընտանիքով, ազգականներով: Ի դեպ, գրեթե բոլոր կրոնադարձված հայերին ներկայացնելիս տրվում է նաև նրանց տոհմաճառը և հետաքրքիր օրինաչափությամբ ծնողների, երբեմն էլ պապերի ու տատերի ոչ հայկական անուններին հետևում են արդեն ավելի ավագ սերնդի նախնիների հայկական անունները, և եթե սա ժամանակագրորեն դասակարգենք, ապա ցեղասպանությունից առաջ ծնվածների գերակշիռ մասը կրում է հայկական, իսկ արդեն 1915-ից հետո գերազանցապես ոչ հայկական անուններ, այսինքն՝ սրանով կարելի է պատկերացում կազմել նաև առերես իսլամացած հայերի ծպտյալ կյանքի սկզբնավորման ժամանակաշրջանի մասին:

1971 թվականին Թունջելի նահանգի Դոլուքյուփ գյուղում գրանցված, 1947 թ. ծնված էթնիկ հայ Մեֆեր Աքյուզը, որ շրջապատում հայտնի է եղել որպես մուսուլման, դիմելով քաղաքացիական հարցերով Մտամբուլի 1-ին ատյանի դատարան՝ հրաժարվել է իսլամից և ընդունել քրիստոնեություն: Այնուհետև մի քանի տարվա ընթացքում նույն ընտանիքից ևս 34 հոգի ընդունել է քրիստոնեություն:

1995 թվականին Յոզղաթ նահանգի Բոդազլըյան գավառում գրանցված Հաջի Մարըքայան ընդունել է քրիստոնեություն, իսկ նրանից մի քանի տարի առաջ և մի քանի տարի հետո նույն քայլին են դիմել նաև նրա 14 ազգականները: Վերջինը, որ քրիստոնեություն է ընդունել, Օզնուր Մարըքայան էՄ 2003 թ.):

Մասունում գրանցված Ջենգիլների ընտանիքից 1975-ից մինչև 2003 թվականը 9 մարդ ընդունել է քրիստոնեություն:

Պատահում է նաև, որ կրոնի հետ փոխում են նաև անունները և ընդունում հայկական անձնանուններ: Օրինակ, Էյյազիզի նահանգի Քեբան գավառում գրանցված Թյուրքան Աքջան, 1995 թվականին ընդունելով քրիստոնեություն, փոխում է նաև անունը՝ դառնալով Մարիամ Մարգարյան:

1993 թվականին Թունջելիում գրանցված 84-ամյա Մուսթաֆա Աթեշը, որը մասնակցել է նաև 1937 թ. Դերսիմի ապստամբությանը ճղարբին Մուսթաֆա՛ անունով, վերադարձել է քրիստոնեության:

Կրոնադարձվածների ցուցակում մեզ հանդիպած տարիքով ամենափոքրիկը 2004 թվականի փետրվարի 19-ին ծնված Մելիսա Չաքըրն է, որի ծնողների (Սյուզան և Մարգիս) 2004 թվականի մայիսի 27-ի դիմումի համաձայն փաստաթղթերում փոխվել է նրա կրոնական պատկանելությունը[2]:

ՄՈՒՇԻ «ԾՊՏՅԱԼ» ՐԱՅԵՐԸ

Նրանցից ոմանք այլևս ծպտյալ չեն, հայերեն են սովորում ու վերադառնում քրիստոնյա արմատներին

Սակայն պատահում է նաև, որ միևնույն ընտանիքից կրոնադարձվում են ոչ բոլորը, և ստացվում է տարօրինակ պատկեր, երբ, օրինակ, հինգ եղբայրներից երեքը, բացահայտելով իրենց հայկական ծագումը, ընդունել են քրիստոնեություն, իսկ մյուս երկու եղբայրները շարունակում են գրանցված մնալ իբրև մուսուլմաններ:

Ծպտյալ հայերի կրոնադարձության դեպքերին անդրադառնալիս պետք է ուշադրություն դարձնել հատկապես հետևյալ երկու կարևոր հանգամանքներին.

ըստ իսլամի, այն մարդիկ, որոնք ընդունելով մուսուլմանություն, այնուհետև հրաժարվում են այդ հավատից, ենթակա են մահապատժի: Սակայն քանի որ Թուրքիան կրոնապետություն չէ, ուստի այդ պատիժը չունի իրավական օրենքի ուժ, սակայն դա չի բացառում այն, որ իսլամից հրաժարվածները կրոնական ծայրահեղականների կողմից կարող են ընկալվել որպես թիրախներ: Բացի այդ, չափազանց դժվար է և հոգեկան մեծ ապրումներ է պատճառում ծպտյալներին ապրել՝ արտաքին աշխարհից շարունակ թաքցնելով իրենց էթնիկ և կրոնական պատկանելությունը, բայց միաժամանակ հեշտ չէ նաև թուրքական իրականության պայմաններում ապրել որպես հայ քրիստոնյա: Այսինքն՝ այս կրոնադարձությունը նույնիսկ Եվրոմիության անդամակցությանը ձգտող Թուրքիայում պետք համարել որոշակի խիզախություն:

Շատ հաճախ էթնիկ պատկանելությունը ստորադասվում է կրոնական պատկանելությանը, և «հայ» ու «քրիստոնյա» հասկացությունները նույնացվում են: Հենց այս պատճառով էլ ծպտյալ հայերի կրոնադարձությունը ինչ-որ առումով կարելի է համարել նաև վերադարձ դեպի ազգային ակունքներ՝ ազգադարձություն:

Ամփոփելով՝ նշենք, որ կրոնափոխ հայության խնդրի գիտական, շահարկումներից հեռու ուսումնասիրությունը չափազանց կարևոր է, և այս հարցում չարդարացված լավատեսական կամ նիհիլիստական մոտեցումները հավասարապես քննադատելի են:

[1] Հրանտ Դինքն այս միտքն արտահայտել է 2007թ. ԱՄՆ-ում հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ:

[2] Başyurt E., Ermeni evlatlıklar, İstanbul, 2006 (2-nci baskı), s.73-76.

[1] Խաչատրյան Ա., Հայերի մահմեդականացումը միջնադարյան Հայաստանում (8-15-րդ դդ.), Իրան-Նամե, Երևան, 1993, թիվ 1, էջ 26:

[2] Այս մասին մանրամասնորեն տե՛ս Մելքոնյան Ռ., Ներքին ամուսնությունների սովորույթը Թուրքիայի ծպտյալ հայերի շրջանում, Հանրապետական, Երևան, 2008, թիվ 5, էջ 6-9:

[3] Մարության Հ., Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Երևան, 2006, էջ 60:

Ռուբեն Մելքոնյան

Քառասունհինգամյա կաշեգործ Նեջմեթին Աբդաշը Մուշում եւ ընդհանրապես Արեւմտյան Հայաստանում ինձ համդիպած հայերից ամենալավ հայերենն էր խոսում: Սեպտեմբերյան մի զով երեկո մենք նստել էինք Մուշ քաղաքի կենտրոնում գտնվող «Պարկ Լոկանտասը» ռեստորանում: Սասունցի Նեջմեթին Աբդաշը, որ իրեն ներկայացրեց երկրորդ անունով եւս՝ Արմեն Գալուստյան, պատմեց իր գերդաստանի պատմությունը: Մինչ մենք զրուցում էինք թեյի սեղանի շուրջը, մոտեցան մի քանի այլ հայեր, որոնց մեծ մասը հայերեն չգիտեր կամ գիտեր ընդամենը մի քանի բառ: Արմենը հայերեն բավական լավ էր խոսում, եւ զգացվում էր, որ եղել է այսօրվա Արեւելյան Հայաստանում ու արբանյակով հետեւում է հայկական հեռուստատեսություններին:

«Ես յոթ տարեկանում իմացա, որ հայ եմ, իմացա պատահական: Մեր գյուղում դպրոց չկար, հարեւան գյուղում էինք դպրոց գնում: Մի օր դպրոցի ճանապարհին մի քուրդ հովիվ ինձ ծեծեց եւ դպրոցական մյուս երեխաների մոտ ասաց, որ ես հայ եմ: Ես այդ օրը առաջին անգամ լսեցի երմենի՝ հայ, բառը: Տուն վերադառնալով, ես անմիջապես պապիս հարցրեցի՝ պապիկ՝ ես քո՞ւրդ եմ, թե՞ հայ: Ես գիտեի, թե քուրդ եմ: Պապս առաջին անգամ ասաց, որ մենք հայ ենք: Պապս դրանից հետո ամեն ինչ պատմեց: Նա ջարդի ժամանակ տասնյոթ տարեկան է եղել, ամեն բան շատ լավ էր հիշում ու մեզ պատմում: Ես յոթ տարեկանից պապիս օգնությամբ սկսեցի հայերեն սովորել: Պապս ինձ ասում էր, որ մեծանաս, կգնաս Խորհրդային Հայաստան, կգնաս Խոր Վիրապ, Էջմիածին, Գառնի... Հայաստանի անկախությունից հետո ես եկա Հայաստան ու զնացի բոլոր այն վայրերը, որ նա ինձ ասել էր գնալ», - պատմեց Արմենը:

Թեյի սեղանի մոտ հավաքված մյուս մշեցիները, բացառությամբ Արմենի 18-ամյա որդու՝ Այթան Աբդաշի կամ պարզապես Հայկի, հայերեն գրեթե չէին հասկանում ու լեզուների վրա հալեցնելով շաքարի հերթական կտորը՝ թեյ էին խմում: «Պարկ Լոկանտասը» ռեստորանի տերը Արմենի քեռին է՝ եւս արմատներով հայ, սակայն հայերեն չգիտի ու մոլի մահմեդական է Աբդուռահման կամ Աբո անունով:

Նեջմեթին Աբդաշը շարունակեց իր պապերի՝ Գալուստյան ընտանիքի պատմությունը: Արմատներով Սասունի Սեմալ գյուղից են, նրա պապը ջարդի դժոգակ օրերին փախել է եւ կարողացել է փրկվել: Նրան պահել է մի քուրդ կին: «Ապա իմ պապը տեղափոխվել է Տիգրանակերտ՝ Դիարբեքիր, ավելի ուշ՝ Մուշի Կոմար գյուղը», - պատմում էր Արմենը: Մինչ նա կշարունակեր իր պատմությունը, մեր շուրջը հավաքվում էին այլ հայեր եւ հետեւում իրենց համար դեռեւս օտար լեզվով խոսակցությանը:

Արմենը յոթ երեխա ունի՝ երեք աղջիկ, չորս տղա, ասաց, որ տանը հիմնականում խոսում են քրդերեն: Երբ հարցրեցի՝ մահմեդական ես, ինչպես քո քեռին ռեստորանի տեր Աբոն՝ Արմենը պատասխանեց. «Դա թող իմ մեջ մնա»: Նրա որդիներից մեկը՝ Այթան Աբդաշը կամ Հայկը, հայերեն խոսում էր, բայց ոչ այնքան լավ: Արեւելյան Հայաստանում եղել էր, ասաց, որ կուզեր

Երեւանի համալսարանում սովորել: Հայկը հայերեն սկսել է սովորել հորից եւ բառարանի օգնությամբ:

«Ես եմ բառարանները բաժանել», - շարունակեց Արմենը: «Լուսահոգի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի ընտանիքն այս կողմերից է, այստեղի հայության համար մեծ գործ է արել: Լատինատառ բառերով հայ-թուրքերեն բառարան է պատրաստել տվել, ես էլ բաժանել եմ Տիգրանակերտում, Վանում, Սասունում: Մեծ մասը երիտասարդներն են, որ ուզում են հայերեն սովորել: Առաջ վախենում էինք անգամ խոսել մեր հայ լինելու մասին, հիմա այլևս չենք վախենում, Եվրոպան ուշադիր է: Մեզ օգնում է նաեւ Ֆրանսիայի նախարար Պատրիկ Դեվեյանը, որը Խարբերդից է, մոտ քառասուն տարի առաջ է տեղափոխվել Ֆրանսիա», - պատմեց Արմենը:

Մուշի շրջանում մոտ 150 տուն ընդունում են, որ հայ են, թեւ նրանց մեծ մասը հայերեն չգիտի: «Հաց թխելու ժամանակ խմորի վրա մատով խաչ ենք անում: Մենք միմյանց հետ լավ կապեր ունենք: Տխրություն կամ ուրախություն լինի, իրար հետ ենք: Այն հայերը, ովքեր անգամ ենթագիտակցորեն են հայ, պահպանել են հայության հուշը, բայց խոսում են քրդերեն եւ հաճախում մզկիթ, նրանք հիմնականում միմյանց մեջ են ամուսնանում: Նրանք գիտեն, հիշում են իրենց անցյալի, իրենց պապերի մասին եւ փորձում են չամուսնանալ քրդերի կամ թուրքերի հետ: Մենք էլ նույնը, ուրիշին աղջիկ չենք տալիս, ուրիշից աղջիկ չենք բերում», - շարունակեց Արմենը:

Կրիպտո ծպտյալ հայերը, ինչպես պնդում են թեմայով զբաղվող մասնագետները, ձեւավորվել են արեւմտահայության մի քանի շերտերից: Դրանց մեջ են այն հայերը, ովքեր Հայոց ցեղասպանությունից հետո, թուրքական յաթաղանից փրկվելու ակնկալիքով, ընդունել են մահմեդականություն, ինչպես նաեւ նրանք, ովքեր առեւանգվել են ու կնության տրվել մահմեդական քրդերին ու թուրքերին կամ որդեգրվել մահմեդական ընտանիքների կողմից: Այժմ արդեն նրանց ծպտյալ անվանելը այնքան էլ արդարացված չէ, քանի որ որոշ մասը այլևս չի վախենում ընդունել իր հայ լինելը, թեւ նրանք շարունակում են կրել մահմեդական ինքնություն, խոսել քրդերեն եւ հաճախել մզկիթ:

Արմենը պատմեց, որ Մուշ քաղաքի երկու մզկիթները նախկինում եղել են եկեղեցիներ, իսկ մի քանի այլ եկեղեցիներ ուղղակի քանդվել կամ փլուզվել են: «Հիմա այլևս չենք վախենում խոսել այդ մասին, հիմա անգամ բոլորն են խոսում ցեղասպանության մասին: Հայկական գյուղերի ամուսնները տասնամյակներ առաջ փոխել են, բայց մինչեւ հիմա էլ բոլորը օգտագործում են հին հայկական անունները՝ Ղարսիկ, Նորչեն, Կոմար, Կարմիրխաչ, Խորոնք»: Նա թվարկեց Մշո դաշտի ու Սասունի տասնյակ հայկական այլ գյուղերի անուններ եւ ասաց, որ մինչեւ հիմա էլ քրդերը հին հայկական անունն են օգտագործում:

Արմենն ասաց, որ վերջին տարիներին պոլսահայության հետ լավ կապեր են պահպանում: «Հրանտ Դինքի ժամանակ սկսվեց, ողորմի Հրանտին, մա շատ ազգասեր էր: Նա էր թերթում հայտարարություն տվել եւ գրել՝ ով հայ է, կարող է այդ մասին տեղյակ պահել «Ակօս»-ի խմբագրությանը: Հրանտի սպանությունից հետո այստեղի հայերն ավելի շատ սկսեցին բացահայտ խոսել իրենց հայ արմատների մասին», - ասաց Արմենը:

Երբ հարցրեցի, թե չե՞ն պատրաստվում հայկական, գոնե կիրակնօրյա դպրոց բացել, Արմենը պատասխանեց.

«Հիմա դեռ դժվար է: Թուրքիան դեռ այդքան ազատ երկիր չէ: Հայաստանը շատ ավելի ազատ երկիր է, քան Թուրքիան»:

Ես չգիտեմ, այն ինչ խոսում էր Արմենը, անկե՞ղծ էր ասում կամ նույնը կպատմե՞ր թուրքերի ու քրդերի ներկայությամբ, բայց այն, ինչ ասաց գրույցի վերջում, ինձ զարմացրեց. «Ես սա համարում եմ Հայաստան, մենք պիտի հետ վերցնենք այս հողերը: Հայերը այստեղ ապրել են հինգ հազար տարի: Մենք Անիի մնացած քաղաք ենք թողել, Սասուն ենք կորցրել, մեր քրքը՝ արմատը, այստեղ է, մենք պիտի այս հողերը վերցնենք: Ես չեմ ուզում, որ Հայաստանի հետ սահմանը բացվի: Թուրքերը կգան, կլցվեն Հայաստան: Այնպես, ինչպես այստեղ՝ Մուշում են մեր հողերը առել, նույն ձեւով էլ Հայաստանում կլինի»:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈՐՅԱՆ

## Մշակույթ

*Ստորև ներկայացնում ենք Լրագրողների համահայկական 5-րդ համաժողովին՝ «Լույս»-ի խմբագրիկողմից ներկայացված երկու նյութերից առաջինը, իսկ հաջորդ համարում կներկայացնենք երկրորդ նյութը*

### Շայ մամուլի նպատակները

*Եղիկ Բաղդասարյան  
«Լույս» ամսագրի  
եւ «Ապագա» հանդեսի  
խմբագիր*

Ինչպես ասում են՝ մամուլը համայնքի «հայելին» է, նրա հույզերի եւ ապրումների ճշգրիտ արտահայտողը՝ եթե լինի պարզ, անկեղծ եւ հարգանքներով լի հանդես իր ժողովրդին:

Որո՞նք են Հայ մամուլի նպատակները.

1. Արտացոլել իրենց համայնքի մշակութային, գրական-գեղարվեստական, գիտական, մարզական եւ հասարակական կյանքը մամուլի օրենքի սահմաններում:
2. Ուշադրության կենտրոնում ունենալ հպատակ երկրի եւ հայոց աշխարհի կարեւորագույն իրադարձությունները:
3. Լինել անկախ մամուլ, խուսափել խմբակցական շահերից, եթե խումբը չէ՝ ողջ համայնքը:
4. Ստեղծել կարեւոր հեճարան մեր մատաղ սերնդի՝ երիտասարդության ցանկությունների համար:
5. Ի հայտ բերել հայ եւ օտար ժողովրդների մշակութային եւ հոգեւոր աշխարհի առնչությունները:
6. Պաշտպանել հայ ժողովրդի մարդկային եւ ազգային իրավունքները:
7. Համակրել հասարակական եւ մշակութային հարցերի լուծման այն եղանակին, որում ներառվում են համայնքի բոլոր անհատների, շերտերի եւ կազմակերպությունների տեսակետները, ուստի դեմ հանդիսանալ հարցերի լուծման միակողմանի մոտեցումներին:
8. Հայ ժողովրդի արդար դատը եւ հայոց ցեղասպանության լուսաբանումն ու իրավական պաշտպանումը լինի ամենօրյա քննարկվող նյութ:
9. Արեւմտյան Հայաստանի մշակութային եւ պատմական կոթողների ոչնչացման վտանգից փրկելու

եւ նրանց պահպանման պահանջատիրությունը պիտի լինի հայ մամուլի ամենօրյա պարտականությունը:

10. Օտար ժողովուրդներին ծանոթացումը մեր մշակույթին եւ պատմությանը տարբեր լեզուներով:

11. Վերոյիշյալ նպատակների իրագործման համար ունենալ հասարակական, մշակութային, գիտական, առողջապահական, գրական-գեղարվեստական, լրատվական, մանկապատանեկան եւ մարզական բաժիններ, եւ իր բոլոր էջերն անխտիր նվիրել մեր ազնվական ժողովրդի հոգեւոր կարիքների բավարարմանը:

12. Խմբագրությունը պիտի միշտ պատրաստ լինի լսելու ընթերցողների իրավացի խոսքը, ընդունելու նրանց դիտողություններն ու առաջարկները, որոնց կաշխատի նկատի առնել մամուլի բոլոր համարներում:

13-Յայ լրագրողը պիտի լավատեսյակ լինի Յայ ժողովրդի պատմության բոլոր ծալքերին, միշտ սովորի եւ սովորեցնի անաչառ եւ դրական հիմքի վրա:

14- Յայ լրագրողը պիտի տիրապետի մայրենի լեզվին, հայերենին իր երկու ճյուղերին:

15- Յայ լրագրողը պիտի հարգի Յայաստանի պաշտոնական լեզուն եւ ուղղագրությունը:

16- Յայ լրագրողը պիտի քաջատեսյակ լինի Յայ ժողովրդի եւ Յայաստանի Յանրապետության ազգային շահերին, եւ երեւան զա նրանց պաշտպանությամբ, խստիվ խուսափելով օտարի դիմելուց իր ներքին հարցերը լուծելու համար:

17- Օժանդակել հայրենի պետությանը ամեն կարելի ձեւերով, գերադասել հայոց պետականությունը եւ նրա հարատեւման ու ամրապնդման հանգամանքը՝ նեղ խմբակցական, կուսակցական եւ անհատական շահերին:

18- Բացահայտել օտար նվաճողական եւ ծավալապաշտական ուժերի ներգործումը հայ իրականության մեջ եւ պայքարել նրա դեմ:

19- Ի նկատի ունենալով որ ամեն մի երկիր եւ ժողովուրդ ունի իր հատուկ աշխարհագրական, քաղաքական-ռազմավարական, պատմական ու մշակութային յուրահատկությունները եւ դրույտները, խուսափել անտեղի եւ ոչ-պատշաճ համեմատություններ անել Յայաստանի ու հայ ժողովրդի եւ օտար երկրների ու ազգերի մեջ:

20- Յայ լրագրողը պիտի ըմբռնի որ ՅՅ եւ Արցախը (եւ ոչ թե Ղարաբաղը) , Յայ ժողովրդի միասնական հայրենի երկիրն են, մեկ ժողովրդով, մեկ մշակույթով, մեկ ելեղեցիով՝ իմա Աբ. Էջմիածինը, եւ մեկ համազգային ռազմավարությամբ:

**ԸԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ**

*Պրոֆ. Ծ. Պ. Աղայան*

XVIII դ. 70-80-ական թվականներին հայ ազատագրական գաղափարներով տոգորված հնդկահայ մի խումբ գործիչներ՝ Մովսես Բաղրամյանը, Յակոբ և Եղիազար Շահամիրյանները, Գրիգոր Խոջոջյանը, Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ Մաղրասում ստեղծում են հայրենասերների խմբակ, որը պրոպագանդում է հայ անկախ պետություն ստեղծելու գաղափարը: Ակնկալվում էր, որ այդ ծրագիրը պետք է իրագործվի հայ ժողովրդի ընդհանուր ապստամբության միջոցով՝ Ռուսաստանի և Վրաստանի զինված ուժերի համատեղ օգնությամբ: Ապստամբության ղեկավարությունը վերապահվում էր Ղարաբաղի մեկիքներին՝

Էջմիածնի աջակցությամբ: Թոթափելով թուրք-պարսկական լուծը, հայերը պետք է ստեղծեին անկախ պետություն:

Իրենց այդ ծրագիրն իրականացնելու համար Մաղրասի հայրենասիրական խմբակի անդամները, հետևելով եվրոպական լուսավորիչներին, խնդիր են դնում առաջին հերթին լուսավորական գործունեություն ծավալել, ուսումնասիրել Յայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը, երիտասարդությանը տոգորել հայրենիքի ազատագրության գաղափարով: Յատկապես անհրաժեշտ է համարվում մայրենի լեզվով հայրենասիրական գրականություն հրատարակել և առաքել Յայաստան: Այդ նպատակով խոշոր վաճառական Շահամիր Շահամիրյանը 1771 թ., Մաղրասում հիմնում է հայկական տպարան, որտեղ տպագրվում են ազատության կոչ անող մի շարք գրքեր: Յովսեփ Էմինի Մաղրաս ժամանելուց հետո (1773), հայրենասիրական խմբակի գործունեությունը նոր թափ ու եռանդ է ստանում: Մաղրասի հայերը տարեկան 12 հազար ռուբլի են տրամադրում, որպեսզի Էմինի ղեկավարությամբ գորախմբեր ստեղծվեն և հայրենիք ուղարկելու համար զինվորական կադրեր պատրաստվեն:

Կարևոր իրադարձություն էր Մաղրասի նորաստեղծ տպարանում Մովսես Բաղրամյանի, «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» քաղաքական կարևոր նշանակություն ունեցող իրապարակախոսական աշխատության լույս ընծայումը 1772թ.: «Նոր տետրակը» հայրենիքը բռնակալների լծից ազատագրելու կոչ է ուղղված հայ երիտասարդությանը:

«Նոր տետրակի» բազմաթիվ օրինակներ ուղարկվում են Ղարաբաղի մեկիքներին և Յայաստանի շատ վայրեր: Մաղրասի հայրենասերների գործունեությունը լայն ծավալ է ստանում: «Նոր տետրակը» 1786 թ. ռուսերեն լեզվով լույս է տեսնում Պետերբուրգում և լայն արձագանք գտնում ռուս հասարակական շրջաններում:

Կարևոր նշանակություն ունեցավ նաև Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատության իրապարակ գալը 1788—1789 թթ.: Այստեղ հիմնականում շարադրված են ապագա հայկական պետության կառուցվածքը և կարգը, որ բուրժուական հանրապետության բնույթ պիտի ունենար:

Այսպիսով, XVIII դ. վերջին քառորդում հնդկահայ բուրժուազիայի առաջադեմ ներկայացուցիչները հայ ազատագրական շարժմանը մեծ թափ հաղորդեցին: Շահամիր Շահամիրյանի և մյուսների ցանքերով կազմված ծրագիրը հայ ժողովրդի ազատագրության ելքը համարում էր Ռուսաստանի օգնությամբ հայ-վրացական միասնական ուժի վրա հենված պայքարը: Յնդկահայերն աշխատանք տարան նաև հայկական հողերը դրամով գնելու ուղղությամբ: Նրանք պատրաստ էին այդ նպատակի համար մեծ գումարներ տրամադրել և ամեն կերպ շահագրգռել ռուսական կառավարությանը:

1768 — 1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ մեծ աշխուժություն սկսվեց թե՛ Ռուսաստանում և թե՛ այլ երկրներում ապրող հայության շրջաններում: Յանդես եկան Յայաստանի ազատագրության և Ռուսաստանի հովանավորության տակ հայկական պետություն ստեղծելու նոր ծրագրեր: Յատկանշական է Ռուսաստանի հայ հարուստներից Մովսես Սաֆարյանի Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությանը, 1769 թ. ներկայացրած ծրագիրը, որի համաձայն Վրաստանի և Ղարաբաղի մեկիքների ուժերով, ռուսական զորքերի

օգնությամբ, պետք է ազատագրվեր Հայաստանը, և Ղարաբաղի մելիքներից մեկը թագավոր կարգվեր: Պահանջ էր դրվում նաև, որ ռուս-թուրքական պայմանագրում հատուկ կետ մտցվեր այն մասին, որ հայերը գտնվում են Ռուսաստանի հովանավորության տակ: 80-ական թվականներին Ռուսաստանի հայերի ազդեցիկ շրջանների նույն ոգով կազմած մեկ ուրիշ ծրագրում նախատեսվում է, որ Հայաստանի թագը կրի իշխան Պոտյոմկինը:

Ազատագրական շարժումների նոր ծրագրերը և Ռուսաստանի ակտիվ ձեռնարկումները՝ շարժվել դեպի Մերձավոր Արևելք, ազատության նոր հույսեր էին առաջացնում: Նորից Մուշը դառնում էր Արևմտյան Հայաստանի ազատագրական պայքարի կարևոր օջախներից մեկը: Արդեն հիշված Հովնանը Կ. Պոլսից կրկին այստեղ է ժամանում և երիտասարդությանը զինելու ջանքեր գործադրում: Այսորիներն ու եզդիները ևս պատրաստակամություն են հայտնում ապստամբել և Հերակլի տրամադրության տակ դնել 20 հազար մարդ:

1769 թ. Ռուսաստանից Վրաստան ուղարկված փոքրաթիվ ջոկատը Թուրքիայի դեմ որևէ ակտիվ գործողություն չժամակեց. ռուսների նպատակն էր թշնամու ուշադրությունը շեղել և եվրոպական ճակատում հաղթանակն ապահովելու համար թուլացնել թուրքական ուժերը:

Զնայած հայ ազատագրական շարժման գործիչների, այդ թվում նաև Հ. Արղությանի թափած ջանքերին, հայ ժողովրդի ազատագրության գործն այս անգամ էլ տեղից չշարժվեց:

Այդ ժամանակահատվածում հայ ժողովրդի ազատագրական ուժերը զգալի չափով ճնշվել ու դաժան հալածանքի էին ենթարկվել: Ղարաբաղը, որ ազատագրական շարժման առավել կարևոր կենտրոններից էր, XVIII դ. երկրորդ կեսին ավատատիրական երկպառակությունների և Փանահ խանի իշխանության հաստատման հետևանքով բոլորովին քայքայվել էր: Հայ ժողովրդի համար նորից անելանելի վիճակ էր ստեղծվել:

Դարավերջին հայ ազատագրական պայքարը վերելքի նոր առիթ էր ստանում: Ռուսաստանի դիրքերն արդեն ամրապնդվել էին Սև ծովի ավազանում և կրկին առաջ է քաշվում Կասպից ծովի շրջանում գերիշխանություն հաստատելու հարցը: XVIII դ. 80-ական թվականներին որոշակի քայլեր արվեցին Անդրկովկասը գրավելու և այնտեղ Ռուսաստանի հովանավորությամբ վրացական և հայկական պետություններ ստեղծելու ուղղությամբ: Դա բխում էր Ռուսաստանի կենսական շահերից՝ վստահելի հենակետեր ստեղծել Անդրկովկասում, և օբյեկտիվորեն համընկնում էր թուրքական և պարսկական լծից ազատագրվելու հայ ժողովրդի դարավոր ձգտումներին:

Ռուսական կառավարության այս ծրագրերի իրագործումը հանձնարարվում է գորավար Սուվորովին, որի հետ սերտ կապերի մեջ էին Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և Հովհաննես Լազարյանը: Հ. Լազարյանի 1780 թ. հունվարի 10-ին Սուվորովին ներկայացված զեկուցագրում նշվում էր, որ ապագա հայկական պետությունը կձևավորվի Ռուսաստանի հովանավորությամբ և կարող է ունենալ 15-20 հազարանոց զորամաս, իսկ պատերազմի ժամանակ այն կհասնի 60 հազարի:

Շար. 4

**Սոհեր**

**Մեր անցած ճամբան**

*Թ. Ղարախանյան Սիրակցի*

Եւ այսքան գրույցներից հետոյ, Վարպետ Համոն ասաց, որ պարոն Հրանդ Մինասյանը կարող է ինձ տեսնի հինգշաբթի առավոտ, բայց ժամը չպարզեց: Այս անսպասելի ուրախությունից վեր-վար թռա ու Վարպետ Համոյին համբուրեցի, բայց Համոն ասաց «Լավ է հալա տեսնենք մե տեղ կհասնենք թե չէ»: Սրտատրոփ ու լեզուս կապ ընկած Հինգշաբթի օրը հասավ եւ պարոն Հրանդ Մինասյանին հանդիպելու հույսով գնացի դեպի G.S.I. (Geological Seismology Institute ) անունով մի Պարսկա-ամերիկյան ընկերություն որը գտնվում էր հենց Աիվազ քաղաքի “24 Մեթրի” անունով փողոցի վրայ եւ Քարուն գետից ոչ շատ հեռու: Քայլած ու քրտնած ինձ տեսնելով հրամայեց նստեմ եւ սեղանի վրայից անձեռոցիկը երկարացրեց որպեսզի քրտինքս մաքրեմ ապա սառը ջուր հրամցրեց եւ ես սովորաբար ամաչկոտ լինելով, ամեն հարցին “ոչ մերսի” ասեցի: Մի քիչ ընտանիքի եւ ընկերների եւ դասերից խոսելով հարցրեց «Չինվորությունդ վերջացրել ես» եւ այս հարցի վրա կանգ առա մի քիչ էլ քրտնեցի եւ ասեցի «դեռ չէ»: Ինձ հանգստացնելու համար ասավ «կարելի է մի գրադմունք գտնեմ համարդ, բայց ավելի լավ է զինվորությունդ լրացնես, ու կգաս իմ մոտ»:

Այս պատմական ու հրաշալի Նոր Ջուղայի քաղցր ու հաճելի բարբառը լսելով սիրոսս մի քիչ տխրեց եւ նույն ժամանակ հույսով լցեց հիշելով իր վերջին խոսքը «ՌԻ ԿԸ-ԳԱՍ ԻՆՉ ՄՈՏ»:

Երկու-երեք անգամ շնորհակալություն հայտնելով հետեւ հետեւ քայլելով «ցտեսություն» ասելով դուրս եկա եւ չզիտեմ ինչպես ինձ հասցրեցի վարպետ Մաքոյի խանութը եւ բարեւի փոխարեն ասեցի «զինվորություն, Մաքօ ջան զինվորություն» եւ գնացի դեպի ջրի բաժակը:

«Բան չկա տղա ջան, բան չկա, նստե»: Մի քիչ նստեցի պատմեցի եւ շնորհակալ լինելով դուրս եկա: Արդեն զինվորական հագուստը երեսակայում էի եւ մի երկու օր անց պիտի ինձ ներկայացնեի:

